

ղիերէնի գլխաւոր ուսուցիչն եղած էր՝ հինաւորց սամաթիացի ժիր անգղիագէտն Աւետիս Տէր Սահակեան, որ մինչեւ 70-75 տարեկան հասակն յատկաբար ու համետաբար դասախօսեց անգղիերէնը՝ մանաւանդ պոլսահայ վաճառականաց և բանասիրաց ⁽¹⁾ :

1863ին Մանչէսթըրի մէջ մատուռի մը հաստատութեան առիթով՝ առժամուն և առտեղեան իսկ խմբագրուած բնագիրէ մը կը քաղենք հետեւեալը, որ կը նշանակէ նաեւ նոյն թուին Մանչէսթըրի և Լիվըրքուլի մէջ գտնուող Հայերուն անունները :

«Մանչէսթըրի ծաղկեալ գործարաններն ու վաճառականութիւնը բնականաբար Հայոց ուշադրութիւնն արթնցունելու էին, որ և 1810 թուէն սկսեալ քանի մը Հայեր հոն առեւտրական տուներ բացին և օր քան զօր շատցան : Բարեպաշտութիւնը ժառանգական ըլլալով Հայոց՝ արդէն ազգային մատուռ մը հաստատելու կարեւորութիւնը վերջին չորս հինգ տարուան մէջ կըզգացուէր, ու քանի մը անգամ խորհուրդներ ալ եղան. սակայն ձեռնարկութիւնն անկատար մնաց այլ եւ այլ անակնկալ պատճառներու համար :

«Վերջապէս անցեալ տարի՝ Մանչէսթըրի պատուելի հայ գաղթականութիւնը, որոյ թիւը 30ի կը հասնէր, ևս քան զեւս կրօնասիրութեան ոգւով շարժեալ՝ Գեր .

(1) Աւետիս Տէր Սահակեանի բերնէն լսած ենք՝ թէ ինք ուսած էր Անգղիացոց հարուստ լեզուն դժուար ինքօզնութեամբ, ասդին անդին իյնալով. մանաւանդ Լիվըրքուլէն Կ. Պոլիս եկող ու խորսխող վաճառարներ նաւերուն անգղիացի նաւապետներուն քով հանապազորդելով և թախանձանքով ստիպելով անոնք վարժեցունել զինքը բրիտանականինոճի և արտասանական դժուարութեանցը : Մեկնող նաւապետն յաջորդ եկող նաւապետին կը յանձնագրէր հայ անգղիադէտը, և այսպէս շարունակաբար :